ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընթերցող և գիտական հասարակայնության սեղանին է դրված մեր հոգեղույս Հայրապետի՝ Նորին Սուրբ Օծություն, Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ. Տ. Վազգեն Ա-ի գրական-մշակութային գործունեությունն ամփոփող «Մատենագիտությունը» /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1995 թ., 208 էջ/, որը հեղինակել է բանասեր-գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, Պետական մրցանակի դափնեկիր Սուրեն Ծ. Վանեցին, նույն ինքը՝ Սուրեն Ծտիկյանը*: Անցողակի նշենք, որ Սուրեն Ծ. Վանեցին ավելի քան տասը տարի է, ինչ զբաղված է երջանկահիշատակ Վազգեն Ա-ի արգասավոր, բազմաշխատ, հայրենանվեր կյանքն ու գրական-հրապարակախոսական և հոգևորական գործունեությունն ուսումնասիրելով: Նրա գրչին են պատկանում այդ թեմային վերաբերող հինգ անուն աշխատություններ և մեր գիտական ամսագրերում ու պարբերականներում հրատարակված շուրջ տասնհինգ մեծ ու փոքր հոդվածներ, որոնցից մի քանիսն արտատպվել են նաև արտասահմանյան մամուլում:

Կրթական-մշակութային գործիչների ստեղծագործական կյանքն ու գործն արտապատկերող «Մատենագիտությունների» հրատարակությունը մեզ մոտ ունի բավականին կայուն ավանդույթներ և ճշգրտված աշխատանքային կարգավիճակ: Այս առիթով արժե հիշատակել մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի հիմնակազմ Գիտական գրադարանի արգասավոր գործունեությունը, որը հրատարակում է «Կենսամատենագիտությունների» հատուկ մատենաշար /արդեն լույս են

---

* *Հոդվածն արդեն հանձնված էր տպագրության, երբ ստացվեց վաստակաշատ բանասեր Սուրեն Ծտիկյանի անժամանակ վախճանման լուրը: Խմբագրությունը ևս խորապես ցավակցում է հանգուցյալի ընտանիքին՝ մեր գրականագիտության և մատենագիտության համեստ ու նվիրյալ մշակի մահվան կապակցությամբ:*

տեսել այդ մատենաշարի հիսուն պրակները/, որոնք նվիրված են հայրենական գիտության նշանավոր երախտավորներին: «Մատենագիտությունն» էլ ձևական առումով գրեթե չի տարբերվում իր նախորդների կողմից հրատարակված, այդ նպատակաուղղվածությունն ունեցող գործերից և կառուցվածքային նույն «բնագիրն» ունի: Այսինքն. առաջին՝ «Եւ գործք նորա իբրեւ զկայծակս» բավականին ընդարձակ բաժնում /էջ 7-48/ տրված է մեր երիցս երջանկահիշատակ Հայրապետի գրական-մշակութային գործունեության բնութագրումը: Դրան հաջորդում է երկրորդ՝ «...Վազգեն Ա Կաթողիկոսի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը» բաժինը /էջ 49-103/, որտեղ, ինչպես արդեն հուշում է վերնագիրը, խստիվ ժամանակագրական հաջորդականությամբ զետեղված են Վեհափառ Հայրապետի ութսունվեցամյա կյանքի /1908-1994/ առավել հիշարժան իրադարձությունները: Աշխատության հիմնական ու առանցքային երրորդ բաժինը, որն ունի «Աշխատությունների մատենագիտություն» խորագիրը /էջ 104-187/, իր մեջ ներառնում է Վազգեն Վեհափառի խնկելի գրչի արգասիքը հանդիսացող հրապարակախոսական հոդվածների, ռումիներենից հայերեն և հայերենից ռումիներեն կատարված թարգմանությունների, ամենազանազան բնույթի գրախոսականների, ազգային և միջազգային հրատապ խնդիրների արձագանքը հանդիսացող մեծ և փոքր «դատումների» Վեհափառ Հայրապետին այնքան բնորոշ շեշտակի ու հատու «վիճաբանությունների» և նման այլ բնույթի գործերի՝ դարձյալ խստիվ ժամանակագրական սկզբունքով դասավորված գիտական ցանկը: Եվ վերջապես վերջինը՝ «Առանձին ուսումնասիրություններ» ենթախորագիրն ունեցող բաժինն է /էջ 191-202/, որտեղ դասավորված են առանձին գրքերի ձևով հրատարակված այն բոլոր աշխատությունները, որոնք լույս աշխարհ են եկել տասնյակ տարիների այն ժամանակային տարածքում, որը ներառնում է գրչի աշխատանքով իրեն դեռ նոր երևակող Կարապետ Պալճյանը, մինչև բազմափորձ ու խորախորհուրդ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ինչպես այդ մակաբերելի է՝ Հայրապետական «Մատենագրությունն» ավարտվում է այնտեղ ամփոփված նյութերն ըստ վերնագրերի հաջորդականության դասավորված «Այբբենական ցանկով» /էջ 203-208/:

Այսքանով և միայն այսքանով ավարտվում է Սուրեն Ծ. Վանեցու կազմած՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինի «Մատենագիտության» և այդ բնույթի՝ նախկին տարիներում հրատա-

րակված համանման աշխատությունների հետ եղած կառուցվածքային աղերսակցությունները: Գրախոսվող աշխատության հետագա հանգամանալից քննությունը ցույց է տալիս, որ Սուրեն Ծ. Վանեցին իր այս աշխատությամբ շատ բանով առաջ է անցել իր նախորդներից, և կաթողիկոսական այս «Մատենագիտությունը» որոշ իմաստով իրենով նշանավորում է մի նոր որակ և հայ մատենագիտական գրականության մի նոր աստիճան:

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում ունեցել է 131 կաթողիկոսներ, և այսօրվա դրությամբ այդ 131 կաթողիկոսներից միայն մեկը՝ Տ. Տ. Վազգեն Վեհափառն է, որ ունի իր տպագրված աշխատությունների «Մատենագիտությունը»: Մեր նախորդ կաթողիկոսներից և ոչ մեկի վերաբերյալ համանման բնույթի գործ չկա, և այս առումով Սուրեն Ծ. Վանեցու կազմած կաթողիկոսական «Մատենագիտությունը» փաստորեն աննախընթաց երևույթ է: Հոգևոր իրականության ներկայացուցչի, և այն էլ Ամենայն Հայոց Կաթողիկոսական մակարդակն ունեցող բարձրաստիճան հոգևորականի, հրատարակած գործերի «Մատենագիտությունը» առ այսօր արվել է առաջին անգամ, և այս առումով էլ Սուրեն Ծ. Վանեցու հրատարակած աշխատությունը իր նախորդը չունի և մի նոր սկիզբ է, որը նկատելի է սույն գրքի՝ բառացիորեն առաջին իսկ էջերից սկսած:

Ընթերցողը տեղեկանում է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինը, իսկ աշխարհական անվամբ՝ Կարապետ Աբրահամի Պալճյանը, իր գրական բեմելն սկսել է քսանչորս տարեկանից, որպես հրապարակախոս և այն էլ՝ ոչ թե իր հայրենի Բուխարեստում, որտեղ ի դեպ կային հայալեզու պարբերականներ, այլ իր երկրից դուրս, հեռավոր Փարիզում հրատարակվող «Մարտկոց» պարբերականում: Օգտվողների համար կարևոր նորություն կլինի և այն, որ մեր հոգելույս Վեհափառը իր գրական կյանքի ամբողջ տևողության ընթացքում, բացի իր սկզբնական «Կ. Պալճյան» ստորագրությունից /իսկ հետագա տարիներին՝ «Վազգեն վարդապետ», «Վազգեն վարդապետ Պալճյան», «Տ. Վազգեն Ծ. վարդապետ», «Վազգեն եպիսկոպոս», «Վազգեն Ա., Կաթողիկոս Ամենայն Հայոց» /, հանդես է եկել նաև վեց կեղծանուններով. «Լևոն», «Լևոն-Կարապետ», «Պ», «Կ. Պ.», «Լ. Կ. Պ.», «Կ. Լ.» և նախորդի նման, այս դեպքում էլ կծանոթանա այն քրտնաջան բանասիրական քննության հետ, որը կատարել է Սուրեն Ծ. Վանեցին՝ այդ կեղծանունները մեկ առ մեկ վերծանելու ուղղությամբ: Ընթերցողը վերջապես շատ ու շատ հետաքրքրական

տեղեկություններ կունենա գրական-հրապարակախոսական այն վիթխարի գործունեության մասին, որը ծավալել է Վազգեն Առաջինը Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալուց /1955 թ. սեպտեմբերի 20/, մինչև իր զարմանալի արգասավոր կյանքի վերջը:

Բերված նյութերի թվարկումն իսկ ապացուցում է, որ հրատարակված «Մատենագիտության» առաջին գլուխը հաջողությամբ բռնում է պահանջվող քննությունը: Այս հանգամանքն ընդգծելի է նաև այն պատճառով, որ, ինչպես հայտնի է, Վազգեն Ա Կաթողիկոսի հոգևորական գործունեության, նրա ծավալած շինարարական և ազգապահպան աշխատանքների կամ արտասահման կատարած բազմաթիվ ուղևորությունների և համանման այլ խնդիրների մասին գրվել է բազմիցս, գրվել է առանձին գրքերով, բայց նրա գործունեության վերլուծությունը այն կտրվածքով, որն արդեն ասվեց, կատարված է առաջին անգամ:

«Մատենագիտության» երկրորդ բաժինը, որն ունի «Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ. Տ. Վազգեն Ա-ի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը», ժամանակագրական հաջորդականությամբ ներառնում է Վեհափառ Հայրապետի ութսունվեցամյա կյանքի գրական-հասարակական դրվագները: Անցողակի նշենք, որ համանման նպատակաուղղվածությունն ունեցող մի աշխատանք Սուրեն Ծ. Վանեցին հրատարակել է դեռ 1990 թվականին, «Ժամանակագրություն» խորագրով, սակայն ներկա պարագայում, կազմողը խնդրին մոտեցել է յուրովի: Ի տարբերություն հիշատակված «Ժամանակագրության», որտեղ թվերի ու փաստերի լեզվով շարադրված է Հայրապետական կյանքը՝ վերցված իր ամբողջության մեջ, ապա այստեղ շեշտը նախ և առաջ դրված է գրական կապերը ներկայացնելու, բնաշխարհի և տարաշխարհի հայ մտավորականության հետ նրա հարաբերությունները ցուցահանելու վրա և այս տեսակետից էլ, ներկայացվող փաստական նյութը իր տեսակի մեջ եզակի է: «Մատենագիտությունից» օգտվողը հարուստ տվյալներ կստանա Վազգեն Կաթողիկոսի և Հակոբ Սիրունու, Մկրտիչ Պոտուրյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Պատրիարք Դուրյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Մարտիրոս Սարյանի, Արամ Խաչատրյանի, Էդուարդ Թոփչյանի, Առաքել Առաքելյանի, Գառզուի, Վիլյամ Սարոյանի, Արթուն Հատիտյանի, Համաստեղի, Սիլվա Կապուտիկյանի, Պարույր Սևակի և էլի ուրիշների հետ կայացած հանդիպումների մասին, կիմանա շատ շահեկան և, որ կարևոր է, առաջին անգամ գրական

շրջանառության մեջ դրվող փաստեր ու փաստական տեղեկություններ այս ամենի մասին: Ասվածն ավելի հստակ ցուցահանելու համար բերենք հետևյալ օրինակը: 1956 թվականի մայիսիս 12-ին, Ամենայն Հայոց Ներընտիր Կաթողիկոս Վազգեն Առաջինը Մոսկվայում մեկժամյա հանդիպում է ունենում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Բուլգանինի հետ: Այս փաստը նշելուց հետո, առ այսօր ավելացվում էր հետևյալը. «Վազգեն Վեհափառը Բուլգանինին է ներկայացնում Մայր Աթոռի գործունեությունը բարելավելու վերաբերյալ յոթ կետից բաղկացած մի հուշագիր»: Սուրեն Ծ. Վանեցու կազմած «Մատենագիտության» մեջ, սակայն, արված է նաև հետևյալ կարևոր հավելումը. «Վազգեն Կաթողիկոսը Նիկոլայ Բուլգանինին է ներկայացնում նաև մի այլ հուշագիր՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու առաջադրանքով»: Ծատ աշխատանք ու բանասիրական պրպտումներ է պահանջվել հեղինակից, մի քանի տողանոց այս հավելումը կատարելու համար /էջ 60/, որից էլ այսօր հայտնի է դառնում, որ Վեհափառ Հայրապետը Լեռնային Ղարաբաղի հարցը բարձրացրել է դեռ 1956 թվականի մայիսին և այն էլ՝ պետական-կառավարական ամենաբարձր մակարդակով, փաստ, որ խոսում է Վազգեն Ա-ի քաղաքացիական ու ազգային ամենաբարձր նկարագրի մասին:

Գրախոսվող գրքի երրորդ՝ «Աշխատությունների մատենագիտություն» խորագրված գլխում ժամանակագրական հաջորդականությամբ զետեղված են այն բոլոր գործերը, որոնք հրապարակվել են ժամանակի այլևայլ պարբերականներում: Զբավարարվելով այդքանով՝ հեղինակն արել է մատենագիտական-բանասիրական առումով մի նոր համարձակ քայլ, որը նրա կազմած «Մատենագիտությունը» էապես տարբերում է նախորդներից: Բերենք ընդամենը երկու օրինակ: 1938 թ. ապրիլի 19-ին Բուխարեստում հրատարակվող «Հայ մամուլ» շաբաթաթերթը տպագրում է Կարապետ Պալճյանի «Սո՛ւտ է» խորագիրը կրող հոդվածը: Հասկանալի է, որ այս վերնագիրը ոչինչ չի ասում ո՛չ հոդվածի գաղափարական բովանդակության, ո՛չ այն ծնող շարժառիթների և ո՛չ էլ այնտեղ քննարկվող հարցերի մասին: Այս նկատի ունենալով էլ, Սուրեն Ծ. Վանեցին, հոդվածի գրության փաստն արձանագրելուց հետո, տվել է համապատասխան բնույթի ծանոթություն-բացատրական /էջ 142-143/, որտեղ համառոտակի պատասխան է տրված հենց այդ բնույթի հարցերին: Կամ. նույն այդ թվականին, նույն պարբերականի

դեկտեմբերի 25-ի համարում հրատարակված է Կարապետ Պալճյանի «Իմ պատասխանը ՊԱՏ-ին», ընթերցողների համար բավականին տարօրինակ վերնագրով հոդվածը: Եվ Սուրեն Ծ. Վանեցուց բավականին ջանք է պահանջվել պարզելու համար նախ՝ որ հիշատակված ՊԱՏ-ը ոչ այլ ոք է, քան պարոն Արտաշես Տիրացյանը, ռումինահայ կրթական-մշակութային և հասարակական ականավոր գործիչը /հետագայում՝ գերմաներենից հայերեն թարգմանիչ Երևանում/, և ուրեմն, եթե չլիներ այդ կարևոր պարզաբանումը, ՊԱՏ-ի ով լինելը ինչպես «Մատենագիտությունից» օգտվողների, այնպես էլ սերունդների համար մնալու էր որպես անլուծելի առեղծված: Նաև Սուրեն Ծ. Վանեցին անդրադառնում է հոդվածների գրության շարժառիթներին: Նման բնույթի բացատրականներ, անհրաժեշտ դիտված բացատրականներ, հոդվածներից կատարված մեծ ու փոքր մեջբերումներ և այլն, կատարված են բազմիցս:

Անկարևոր չէ նշել նաև «Մատենագիտության» «գործող անձի», այսինքն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հետ մշակած աշխատանքային այն ինքնատիպ գործելաեղանակը, որը կայուն հետևողականությամբ կիրառել է գրախոսվող գրքի հեղինակը: Այսպես, օրինակ, մատենագրված է «Հերկ» ամսագրի 1937 թ. թիվ 6-ում հրատարակված «Այսօրվա երիտասարդությունը» խորագիրը կրող հոդվածը, որն անստորագիր է, և որի հեղինակային պատկանելությունը ճշտված է հետևյալ ձևով. «Ինչպես հավաստեց Վեհափառ Հայրապետը 1993 թ. մայիսի 20-ին մեզ հետ կայացած հարցազրույցի ժամանակ, հոդվածի հեղինակն ինքն է» /էջ 125-126/: Այսինքն՝ հիմնավորապես ճշգրտվում է հիշատակված հոդվածի՝ ում գրչի արգասիք լինելը: Այս ձևով, գրախոսվող «Մատենագիտության» մեջ կան շուրջ քառասուն անուն ամենատարբեր բնույթի հոդվածներ, որոնք անստորագիր են, կամ ունեն ընդամենը «Խմբագրական» նշումը, և որոնց հեղինակի ով լինելը մեկընդմիշտ անհայտ կմնար, եթե Սուրեն Ծ. Վանեցին իր աշխատանքի ընթացքում լայնորեն չկիրառեր գործունեության այն ոճը, որի մասին արդեն ասացինք: Այս դեպքում էլ բավարարվենք բերված մեկ օրինակով և արձանագրենք, որ օրինակների պակասից գանգատվելու հիմքեր չունենք:

Եվ, վերջապես, գրախոսվող «Մատենագիտության» վերջին բաժինը, որն ունի «Առանձին ուսումնասիրություններ» ընդհանուր խորագիրը, բացի այն, որ Հայրապետական յուրաքանչյուր աշխատության կապակցությամբ հաղորդվում են մատենագիտական

անհրաժեշտ տեղեկություններ, ասենք՝ հրատարակության տեղը, թիվը, էջերի քանակը, խմբագիրը, այդ աշխատության վերահրատարակությունները, այլևայլ լեզուներով կատարված թարգմանությունները, եթե ժողովածուներ են, ապա դրանց բովանդակությունները և այլն, տրված է նաև նրանց ստեղծման գրական-բանասիրական պատմությունը: Օրինակ՝ «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ /վերլուծական փորձ/» աշխատության կապակցությամբ, վերոհիշյալ բոլոր տվյալներից բացի, իմանում ենք նաև, որ այն սկզբնապես կարդացվել է որպես զեկուցում Բուխարեստում գործող «Հայ ուսանողների միություն» երիտասարդական կազմակերպության հերթական՝ 1936 թվականի հունվարյան նիստում: Զեկուցումն ընթացել է «դրվատանքով ու քաջալերանքով», բայց եղել են և դիտողություններ, առաջարկություններ, ցանկություններ: Հրատարակության պատրաստելով իր զեկուցումը՝ հեղինակ Կարապետ Պալճյանը հաշվի է առել արված դիտողությունները, որից, անկասկած, շահել է աշխատությունը: Աշխատանքային այս գործընթացն էլ նորույթ է ներկա «Մատենագիտության» մեջ և անպայման արձանագրելի նորույթ:

Վերջում մաղթենք, որ իր տեսակի մեջ առ այսօր առաջինը հանդիսացող սույն գիրքը ունենա իր արժանավոր հաջորդները, որ հայ և սփյուռքահայ ընթերցողներն ու գիտական հասարակայնության ներկայացուցիչները իրենց սեղանի վրա ունենան մեր հոգևոր դասի մյուս ականավոր դեմքերի մեծ ու փոքր «Մատենագիտությունները», որոնց կարիքը, ավելորդ է թերևս ասելը, զգացվում է մեծապես:

ՎԱՉԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային
Ակադեմիայի ակադեմիկոս